ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/108

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Բողոք բերող՝ «Աբի» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Աբի» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-20-7/21» ծածկագրով բաց մրցույթ, զինվորական վրանների, արշավի մահճակալների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Աբի» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 25.09.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-20-7/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու հանձնաժողովի նիստի թիվ 5 արձանագրության 2.3-րդ կետի համաձայն «Աբի» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 25.09.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի կողմից 25.09.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/108 համարի ծածկագիրը::

02.10.2020թ.-ին, 09.10.2020թ.-ին և 16.10.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 09.10.2020թ.-ին և որոշման հրապարակման օր է նշանակվել 16.10.2020թ.-ին:

2. <u>«Աբի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Աբի» ՍՊԸ-ն 25.09.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ «Զինվորական վրանների, արշավի մահճակալների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-20-7/21» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Վերոնշված Ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, հայտ է ներկայացրել նաև «ԱԲԻ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.09.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 2.3 կետի համաձայն՝ «ԱԲԻ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ուստի գնահատող հանձնաժողովը 22.09.2020թ., հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, մերժել «ԱԲԻ» ՍՊԸ-ի հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում ե նրանց միջև մրցակցության խրախուսում.

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործով դատարանը կայացնում է եզրափակիչ և միջանկյալ դատական ակտեր:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, ինչպես նաև դատարանի պահանջները կատարման համար պարտադիր են դրանց հասցեատերերի համար և ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն դատական ակտի և դատարանի պահանջների չկատարումը հանգեցնում է օրենքով նախատեսված պատասխանատվության:

Հայանում ենք, որ «ԱԲԻ» ՍՊԸ-ն ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 16.04.2020թ. կայացրած թիվ ՍՑ-ՆԳ-2020/68 որոշմամբ:

Վերոնշված որոշման դեմ 06.05.2020թ. «ԱԲԻ» ՍՊԸ-ն հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան, որով Դատարանին խնդրել է՝ անվավեր ճանաչել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի 16.04.2020թ. կայացրած թիվ ՍՑ-ՆԳ-2020/68 որոշումը՝ «ԱԲԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարելու և «ԱԲԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով ներառելու վերաբերյալ:

Միևնույն ժամանակ հայցադիմումի հետ ներկայացվել է հայցի ապահովում, որով Դատարանին միջնորդել էինք՝

1. Կասեցնել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի 16.04.2020թ. կայացրած թիվ ՍՑ-ՆԳ-2020/68 որոշման կատարումը՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

2. Պարտավորեցնել ՀՀ ֆինանսների նախարարությանը www.gnumner.am համացանցային կայքում հրապարակած «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ»-ից հանել «ԱԲԻ» ՍՊԸ-ին մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/13254/02/20 քաղաքացիական գործով 19.05.2020թ. կայացրած «Հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ (կցվում է) որոշել է. «Հայցվորի կողմից հայցադիմումով ներկայացրած հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարել: Հայցի ապահովման նպատակով կասեցնել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիպանի 16.04.2020թ. կայացրած թիվ ՍՑ-ՆԳ-2020/68 որոշման կատարումը մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մանելը և պարտավորեցնել ՀՀ ֆինանսների նախարարությանը www.gnumner.am համացանցային կայքում հրապարակած «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ»-ից հանել «ԱԲԻ» ՍՊԸ-ին մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

22.09.2020թ. «ԱԲԻ» ՍՊԸ-ն գրություն է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարություն /կցվում է/, որով խնդրել է «ԱԲԻ» ՍՊԸ-ին հանել ՀՀ ֆինանսների նախարարությանը www.gnumner.am համացանցային կայքում, հրապարակած «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ »-ից և գրությանը կցել 19.05.2020թ. Դատարանի կողմից կայացրած <<Հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշումը:

Վերը նշված գրության պատճենը կից դատարանի համապատասխան որոշմամբ, 24.09.2020թ. ևս «ԱԲԻ» ՍՊԸ-ի կողմից ուղարկվել է մրցույթի քարտուղարի էլ. հասցեին:

Ստացվում է մի իրավիճակ, որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը դեռևս 19.05.2020թ. կայացրած որոշմամբ կասեցրել է «ԱԲԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով ընդգրկելու վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 16.04.2020թ. թիվ ՍՑ-ՆԳ-2020/68 որոշումը մինչև սույն դատական վճռով վերջնական դատական տկտի ուժի մեջ մտնելը, սակայն գնահատող հանձնաժողովը, հիմք

ընդունելով Դատարանի կողմից արդեն իսկ կասեցված (փաստացիորեն արդեն չգործող) որոշումը մերժել է Ընկերության հայտը այն հիմնավորմամբ, թե «ԱԲԻ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու պահին ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մինչդեռ ակնհայտ է, որ եթե Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը դեռևս 19.05.2020թ. կայացրած որոշմամբ կասեցրել է «ԱԲԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով ընդգրկելու վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 16.04.2020թ. թիվ ՍՑ-ՆԳ-2020/68 որոշումը՝ մինչև սույն դատական վեճով վերջնական դատական ակտի ուժի մեջ մտնելը, ուստի 16.09.2020թ. իրավտբանակ ուժ չունի «ԱԲԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով ընդգրկելու վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 16.04.2020թ. թիվ ՍՑ-ՆԳ-2020/68 որոշումը:

Հետևաբար գնահատող հանձնաժողովի կողմից Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/13254/02/20 քաղաքացիական գործով 19.05.2020թ. կայացրած որոշման և վերոհիշյալ որոշման մասին իրազեկված լինելու պայմաններում «ԱԲԻ» ՍՊԸ-ի հայտը մերժելը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 7-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի պահանջների խախտում: Վերոհիշյալը ոչ իրավաչափորեն հանգեցրել է «ԱԲԻ» ՍՊԸ-ի Գնումների մասին» ՀՀ օրենքով երաշխավորված գնման գործընթացին մասնակցելու իրավունքի իրացման սահմանափակմանը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին նաև տեղեկացնում ենք, որ թիվ ԵԳ/13254/02/20 քաղաքացիական գործի շրջանակներում Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կայացրած իրավապարտադիր որոշմամբ արդեն իսկ Դատարանը կասեցրել է «ԱԲԻ» ՄՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով ընդգրկելու վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 16.04.2020թ. թիվ ՍՑ-ՆԳ-2020/68 որոշումը, սակայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մինչ օրս պաշտոնական տեղեկագրում հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող ւէասնակիցների ցուցակից «ԱԲԻ» ՍՊԸ-ի անվան դիմաց չի կատարվել համապատասխան նշումը:

Այնինչ, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Պետրոսյանի կողմից 19.05.2020թ. կայացրած հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարելու մասին որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից այն է 19.05.2020թ., և այն ենթակա չէ բողոքարկման և ենթակա է անհապաղ կատարման:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Աբի» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-20-7/21» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու հանձնաժողովի նիստի թիվ 5 արձանագրության 2.3 կետի համաձայն «ԱԲԻ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Ընկերությունը 14.10.2020թ.-ին ներկայացված բողոքի լրացմամբ հավելյալ հայտնել է հետևյալը.

«Ինչպես հայտնել ենք «ԱԲԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած բողոքով, «ԱԲԻ» ՍՊԸ-ն ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 16.04.2020թ. կայացրած թիվ ՍՑ-ՆԳ-2020/68 որոշմամբ:

Վերոնշված որոշման դեմ 06.05.2020թ. «ԱԲԻ» ՍՊԸ-ն հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան, որով Դատարանին խնդրել է անվավեր ճանաչել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի 16.04.2020թ. կայացրած թիվ ՍՑ-ՆԳ-2020/68 որոշումը «ԱԲԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներսաելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարելու և «ԱԲԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցեչու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով ներստիլու վերաբերյալ:

Միևնույն ժամանակ հայցադիմումի հետ ներկայացվել է հայցի ապահովում, որով Դատարանին միջնորդել էինք

1. Կասեցնել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի 16.04.2020թ. կայացրած թիվ ՍՑ-ՆԳ-2020/68 որոշման կատարումը մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

2. Պարտավորեցնել ՀՀ ֆինանսների նախարարությանը www.gnumner.am համացանցային կայքում հրապարակած «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ»-ից հանել «ԱԲԻ» ՍՊԸ-ին մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/13254/02/20 քաղաքացիական գործով 19.05.2020թ. կայացրած «Հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ (կցվում է) որոշել է. «Հայցվորի կողմից հայցադիմումով ներկայացրած հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարել: Հայցի ապահովման նպատակով կասեցնել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի 16.04.2020թ. կայացրած թիվ Ս8-ՆԳ-2020/68 որոշման կատարումը մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը և պարտավորեցնել ՀՀ ֆինանսների նախարարությանը www.gnumner.am համացանցային կայքում հրապարակած «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ»-ից հանել «ԱԲԻ» ՍՊԸ-ին՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Բողոքներ քննող անձին տեղեկացնում ենք, որ Դատարանի 19.05.2020թ. կայացրած «Հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամն հիմն վրա 01.06.2020թ. տրվել է կատարողական թերթ, որի հիմքով ԴԱՀԿ ծառայությունը 03.06.2020թ. հարուցել է համապատասխան կատարողական վարույթ:

Թիվ ԵԴ/13254/02/20 քաղաքացիական գործով 01.06.2020թ. տրված կատարողական թերթի հիման վրա 03.06.2020թ. հարուցված համապատասխան կատարողական վարույթը կատարման հիմքով ավարտվել է դեռևս 22.06.2020թ. (համապատասխան որոշումը կցվում է): Սակայն պարզվել է, որ Դատարանի իրավապարտաղիր որոշման պայմաններում ՍՊԸ-ի համար անհասկանալի տեխնիկական պատճառով «ԱԲԻ» ՍՊԸ-ն չի հանվել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից www.gnumner.am համացանցային կայքում հրապարակած «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ»-ից:

22.09.2020թ. «ԱԲԻ» ՍՊԸ-ն գրություն է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարություն /կցվում է/, որով խնդրել է «ԱԲԻ» ՍՊԸ-ին հանել ՀՀ ֆինանսների նախարարությանը www.gnumner.am համացանցային կայքում հրապարակած «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ»-ից և գրությանը կցել 19.05.2020թ. Դատարանի կողմից կայացրած «Հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշումը:

Վերը նշված գրության պատճենը կից դատարանի համապատասխան որոշմամբ, 24.09.2020թ. ևս «ԱԲԻ» ՍՊԸ-ի կողմից ուղարկվել է մրցույթի քարտուղարի էլ. հասցեին:

Ստացվում է մի իրավիճակ, որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը դեռևս 19.05.2020թ. կայացրած որոշմամբ կասեցրել է «ԱԲԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով ընդգրկելու վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 16.04.2020թ. թիվ ՍՑ-ՆԳ-2020/68 որոշումը մինչև սույն դատական վճռով վերջնական դատական ակտի ուժի մեջ մտնելը, սակայն գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Դատարանի կողմից արդեն իսկ կասեցված (Փաստացիորեն արդեն չգործող) որոշումը՝ մերժել է Ընկերության հայտը այն հիմնավորմամբ, թե «ԱԲԻ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու պահին ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մինչդեռ ակնհայտ է, որ եթե Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը դեռևս 19.05.2020թ. կայացրած որոշմամբ կասեցրել է «ԱԲԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով ընդգրկելու վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 16.04.2020թ. թիվ ՍՑ-ՆԳ-2020/68 որոշումը մինչն սույն դատական վեճով վերջնական դատական ակտի ուժի մեջ մտնելը, ուստի 16.09.2020թ. իրավաբանակ ուժ չունի «ԱԲԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով ընդգրկելու վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 16.04.2020թ. թիվ ՍՑ-ՆԳ-2020/68 որոշումը:

Հետևաբար գնահատող հանձնաժողովի կողմից Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/13254/02/20 քաղաքացիական գործով 19.05.2020թ. կայացրած որոշման պայմաններում «ԱԲԻ» ՍՊԸ-ի հայտը մերժելը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 7-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի պահանջների խախտում: Վերոհիշյալը ոչ իրավաչափորեն հանգեցրել է «ԱԲԻ» ՍՊԸ-ի Գնումների մասին» ՀՀ օրենքով երաշխավորված գնման գործընթացին մասնակցելու իրավունքի իրացման սահմանափակմանը:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք հաշվի առնել, որ տեխնիկական խնդիրը, այն է՝ «ԱԲԻ» ՍՊԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանը www.gnumner.am համացանցային կայքում հրապարակած «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ»-ից չհանելը չպետք է հանդիսանա հիմք, պատճառ վերջինիս գնումներին մասնակցելու իրավունքից զրկելու համար:

Ավելին, գտնում ենք, որ վերոհիշյալ պարագայում, եթե առկա է Դատարանի իրավապարտադիր և վերջնական որոշում, որը ուժի մեջ է մտնում հենց հրապարակման պահից, ապա նման պարագայում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի իրավապարտադիր որոշմամբ պետք է վերականգնի «ԱԲԻ» ՍՊԸ-ի Օրենքով երաշխավորված գնումների գործընթացին մասնակցելու իրավունքը: Հակառակ դեպքում կստացվի մի իրավիճակ, երբ ինչ-ոչ տեխնիկական խնդրի կամ ինչ-որ անձանց լիազորությունները ոչ պատշաճ կատարելու պատճառով կարող է լինել արդարացում Դատարանի իրավապարտադիր որոշման պարագայում ՍՊԸ-ի մասնակցության իրավունքի զրկման և չվերականգնման համար:

Մինչդեռ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Պետրոսյանի կայմից 19.05.2020թ. կայացրած հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարելու մասին որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից՝ այն է 19.05.2020թ., և այն ենթակա չէ բողոքարկման և ենթակա է անհապաղ կատարման:»:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել են «Աբի» ՍՊԸ-ի բողոքը բավարարել:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 25.09.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/14544-2020 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Աբի» ՍՊԸ-ի կողմից 25.09.2020թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, չներկայանալով հրավիրված նիստերին, 29.09.2020թ.-ին թիվ Մ-38024-2020 գրությամբ ներկայացրել է գրավոր դիրքորոշում և հայտնել հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 25.09.2020թ. N /ԲՔԱ-ԼՕ/2/14544-2020 գրության՝ հայտնում եմ հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-20-7/21» ծածկագրով գնման

ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «ԱԲԻ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից):

www.procurement.am կայքում հրապարակված «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ»-ի համաձայն՝ Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (15.09.2020թ.) ներառված է եղել նշված ցուցակում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.1 կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ «Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.»:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 22.09.2020թ. մերժել է «ԱԲԻ» ՍՊԸ հայտը:

Կից ներկայացվում են անհրաժեշտ փաստաթղթերը:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/108 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից զինվորական վրանների, արշավի մահճակալների ձեռքբերման նպատակով 04.08.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-20-7/21» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ):

ii. Մրցույթին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների 15.09.2020թ.-ին հայտ է ներկայացրել նաև «Աբի» ՍՊԸ-ն՝ թիվ 2 չափաբաժնի մասով:

iii. Մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 16.09.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության 2.3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը արձանագրել է, որ «Աբի» ՍՊԸ-ն ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ուստի 22.09.2020թ.-ին գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշել է «Աբի» ԱՊԸ-ի հայտը մերժել:

iv. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի 16.04.2020թ.-ին կայացված թիվ ՍՑ-ՆԳ-2020/68 որոշմամբ «Աբի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարվել է և Ընկերությունը ընդգրկվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու (2) տարի ժամկետով:

v. 16.04.2020թ.-ին կայացված թիվ ՍՑ-ՆԳ-2020/68 որոշումը հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում 20.04.2020թ.-ին:

vi. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/13254/02/20 քաղաքացիական գործով հայցի ապահովման միջոց կիրառելու մասին 19.05.2020թ.-ին կայացված որոշման «Աբի» ՍՊԸ-ի կողմից հայցադիմումով ներկայացրած՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարվել է և դատարանը որոշել է՝

1. Կասեցնել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի 16.04.2020թ.-ին կայացրած թիվ ՍՑ-ՆԳ-2020/68 որոշման կատարումը՝ մինչև սույն գործով եզրափակիչ դատական ակտի ուժի մեջ մտնելը:

2. Պարտավորեցնել ՀՀ ֆինանսների նախարարությանը www.gnumner.am համացանցային կայքում հրապարակած «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ»-ից հանել «Աբի» ՍՊԸ-ին մինչև սույն գործով եզրափակիչ դատական ակտի ուժի մեջ մտնելը:

vii. ՀՀ ԱՆ ՀԿԱ ծառայության կողմից կատարողական վարույթն ավարտելու մասին 22.06.2020թ.-ին կայացված որոշման համաձայն՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 01.06.2020թ.-ին տրված թիվ ԵԴ/13254/02/20 կատարողական թերթի համաձայն պետք է կասեցնել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի 16.04.2020թ.-ին կայացրած թիվ ՍՑ-ՆԳ-2020/68 որոշման կատարումը՝ մինչև սույն գործով եզրափակիչ դատական ակտի ուժի մեջ մտնելը: Կատարողական գործողությունների ընթացքում հարկադիր կատարողի կողմից 03.06.2020թ.-ին կայացրած «Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին» որոշմամբ կասեցվել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի 16.04.2020թ.-ին կայացրած թիվ ՍՑ-ՆԳ-2020/68 որոշման կատարումը մինչև սույն գործով եզրափակիչ դատական ակտի ուժի մեջ մտնելը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ, 28.1-րդ և 41.1.5-րդ հոդվածներով, ՀՀ ԱՆ ՀԿԱ ծառայության կողմից կայացվել է հարուցված թիվ 06245689 կատարողական վարույթը ավարտելու մասին որոշում:

viii. ՀՀ ֆինանսների նախարարության 25.09.2020թ.-ի թիվ 01-1/26-1/14549-20 գրության համաձայն՝ «Աբի» ՍՊԸ-ն 26.09.2020թ.-ին հանվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Աբի» ՍՊԸ-ի կողմից 25.09.2020թ.-ի ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ … գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված անձինք գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն, ընդ որում՝ վերջիններս այդ ցուցակում պետք է ներառված լինեն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, որպիսի պայմաններում, այդ հիմքով, գնահատող հանձնաժողովը պետք է ներկայացված հայտը գնահատի անբավարար և մերժի այն:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտակա-նությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործով դատարանը կայացնում է եզրափակիչ և միջանկյալ դատական ակտեր: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, ինչպես նաև դատարանի պահանջները կատարման համար պարտադիր

են դրանց հասցեատերերի համար և ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման հիման վրա կազմված կատարողական թերթը դատարանն անհապաղ ուղարկում է հարկադիր կատարման:

2. Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին դատարանի որոշումը կատարվում է անհապաղ՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

3. Սույն օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված հայցի ապահովման միջոցները կիրառելու դեպքում դատարանը կարող է, առանց կատարողական թերթը հարկադիր կատարման ուղարկելու, հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումն անմիջականորեն ուղարկել կամ առձեռն հանձնել այն անձին, որի դեմ կիրառվել է հայցի ապահովման միջոցը:

4. Այն դեպքերում, երբ դատարանը հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումն անմիջականորեն ուղարկել կամ առձեռն հանձնել է այն անձին, որի դեմ կիրառվել է հայցի ապահովման միջոցը, սույն օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված արգելքները խախտելու համար դատարանի որոշմամբ կարող է նշանակվել դատական տուգանք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանն առանձին ակտի ձևով կայացնում է այն որոշումները, որոնք ենթակա են բողոքարկման: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և այդ սկզբունքի շրջանակներում՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրության հատկանիշին: Մասնավորապես, վկայակոչված որոշմամբ արձանագրվել է, որ արդար դատաքննության իրավունքը պահպանված է այն դեպքում, երբ անձը հնարավորություն ունի ստանալու որոշակի, հաստատուն որոշում՝ կապված իր իրավունքների և պարտականությունների հետ, ու կարող է համոզված լինել, որ որոշ ժամանակ անց այդ որոշումը չի վերացվի:

Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի Կոնվենցիայի նախաբանի լույսի ներքո, որի համաձայն՝ պայմանավորվող կողմերի ընդհանուր ժառանգության մասն է իրավունքի գերակայությունը, որի հիմնարար հայեցակետերից է իրավական որոշակիության սկզբունքը, որն inter alia պահանջում է, որ դատարանի կողմից որևէ հարցի կապակցությամբ կայացված վերջնական դատական ակտը կասկած չհարուցի *(տե՛ս, Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի գործով Եվրոպական դատարանի 28.10.1999 թվականի վճիռը, գանգատ թիվ 28342/95, կետ 61)*, միաժամանակ նշել է, որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է res judicata սկզբունքի, այն է՝ դատական ակտերի վերջնական լինելու սկզբունքի պահպանում: Այդ սկզբունքը պահանջում է, որ կողմերից ոչ մեկը չունենա իրավունք պահանջելու վերջնական և պարտադիր դատական ակտի վերանայում՝ ուղղակի գործի կրկնակի քննության և գործով նոր ակտի կայացման նպատակով: Այսինքն՝ հարցի առնչությամբ երկու կարծիքի առկայության հնարավորությունը չպետք է հիմք հանդիսանա կրկնակի քննության համար: Նահանջն այդ սկզբունքից արդարացված է միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է էական և անհերքելի բնույթ ունեցող հանգամանքներում:

Իրավական որոշակիության սկզբունքի բովանդակության մեջ ներառվում են հետևյալ դրույթները.

- դատարանների կողմից կայացված վերջնական, այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած դատական որոշումները ենթակա չեն վերանայման,

- անթույլատրելի է դատարանի կողմից արդեն մեկ անգամ լուծված գործի կրկնակի քննություն,

- կողմերից ոչ մեկը չի կարող պահանջել վերջնական, այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայում միայն կրկնակի քննության իրականացման և նոր ակտի կայացման նպատակով,

- վերջնական դատական ակտի վերանայումը նահանջ չէ իրավական որոշակիության սկզբունքից, եթե այն իրականացվում է դատական սխալի, արդարադատության սխալ իրականացման ուղղման նպատակով,

- վերանայումը չի կարող լինել բողոքարկման քողարկված ձև, իսկ գործի նկատմամբ կողմերի հակադիր հայացքների առկայությունն ինքնին չի կարող հիմք ծառայել վերջնական դատական ակտի վերանայման համար:

Իրավական որոշակիության դրույթներին լիարժեք չափով չհամապատասխանող դատավարության փուլերի առկայությունը բերում է գործի քննության ժամկետների ավելացմանը, ինչն ակնհայտորեն հետապնդվում է գործերի քանակի աճով, ինչում Եվրոպական դատարանը տեսնում է ողջամիտ ժամկետներում դատական վեճերի քննության սկզբունքի խախտում *(տե՛ս, Գայանե Վարդանյանն ընդդեմ Վարդան ու Միշա Վարդանյանների և մյուսների թիվ ԱՐԴ/0062/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):*

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հավելել, որ իրավական որոշակիության սկզբունքը, ըստ էության, երաշխավորում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կայունությունը, ինչը, ի թիվս այլ հատկանիշների (անհերքելիություն, բացառիկություն, նախադատելություն), ենթադրում է այդպիսի դատական ակտի պարտադիրությունը:

Ըստ այդմ՝ պարտադիրության հատկանիշն անմիջականորեն բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի իրավակարգավորումից և ենթադրում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իրավաբանական անձինք և քաղաքացիներն իրենց գործունեության ընթացքում պարտավոր են հաշվի առնել օրինական ուժի մեջ մտած դատական ակտը և իրավունք չունեն տվյալ դատական ակտով կայացված հարցի վերաբերյալ կայացնելու նոր որոշում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 1–ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության դատարանների (...) դատական ակտերի (...) հարկադիր կատարումն ապահովելու պայմանները և կարգը (...):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը նույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է (...):

Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ թեև ՀՀ Սահմանադրությունը և Կոնվենցիան ուղղակիորեն չեն ամրագրում դատական ակտերի կատարման իրավունքը որպես արդար դատաքննության իրավունքի բաղադրիչ, սակայն դատական ակտերի կատարումը դիտարկվում է որպես արդար դատաքննության բաղկացուցիչ տարր, այն ունի բացառիկ նշանակություն արդարադատության արդյունավետ կենսագործման համար, քանի որ մարդու խախտված իրավունքների դատական պաշտպանության իրավունքը չի կարող երաշխավորված իրացվել, եթե վերջինիս խախտված իրավունքների վերականգնման վերաբերյալ վերջնական դատական ակտը մնում է անկատար:

ՀՀ սահմանադրական դատարանը 24.09.2013 թվականի թիվ ՍԴՈ-1115 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտի նպատակը վերջին հաշվով խախտված իրավունքները վերականգնելու նկատառումներով արդարադատության իրականացման արդյունքում ընդունված ակտի կատարման ապահովումն է: Այսինքն՝ դատական ակտերի հարկադիր կատարում պահանջելու իրավունքն ածանցվում է դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքներից, որպիսի պայմաններում այդ իրավունքը պետք է վերապահվի դատավարության այն մասնակցին, որի խախտված իրավունքը վերականգնելու նպատակով ընդունված է համապատասխան դատական ակտ կամ դատական գործառույթներ իրականացնող մարմնի ակտ: Հետևաբար դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքի բաղադրատարր և «իր գործի հրապարակային քննության»՝ որպես դատավարական գործընթացի փուլ:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նշված մոտեցումը համահունչ է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի հետ, որի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը կդառնա երևակայական իրավունք, եթե պետության իրավական համակարգը թույլ տա, որ վերջնական և պարտադիր ուժ ունեցող դատական որոշումները մնան անկատար: Ըստ Եվրոպական դատարանի՝ դժվար կլինի պատկերացնել, որ 6-րդ հոդվածը, մանրամասն նկարագրելով կողմերին տրամադրվող դատավարական երաշխիքները (արդար, հրապարակային և արագ դատաքննություն), չպաշտպաներ դատական որոշումների կատարումը: Դատական ակտերի կատարման նկատմամբ 6-րդ հոդվածի գործողության բացառումը կհանգեցներ իրավունքի գերակայության սկզբունքի հետ անհամատեղելի իրավիճակների: Ուստի ցանկացած դատարանի կողմից կայացված որոշման կատարում պետք է դիտվի որպես «դատաքննության» բաղկացուցիչ մաս՝ 6-րդ հոդվածի իմաստով *(տե՛ս, HORNSBY v. GREECE գործով ՄԻԵԴ-ի 19.03.1997 թվականի վճիռը, 40-րդ կետ, MOSTACCIUOLO v. ITALY (No. 2) գործով ՄԻԵԴ-ի 29.03.2006 թվականի վճիռը, 85-րդ կետ, RAYLYAN v. RUSSIA գործով ՄԻԵԴ-ի 15.02.2007 թվականի վճիռը, 27-րդ կետ, Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ-ի 01.12.2009 թվականի վճիռը, 66-րդ կետ):*

Այսպիսով, դատական ակտերի հարկադիր կատարման վերաբերյալ ՄԻԵԴ-ի և ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ցուցաբերվող հայեցակարգային մոտեցման

համաձայն՝ դատական ակտերի հարկադիր կատարումն արդարադատության շարունակությունն է. այն չի կարող առանձնացվել արդարադատությունից: Առանց դատական ակտերի պատշաճ կատարման դատավարությունն արդյունավետ չի լինի և չի հասնի իր նպատակներին, քանի որ իրավունքի խախտումները կարելի է վերացնել միայն սուբյեկտիվ իրավունքներն իրապես վերականգնելու միջոցով, որը տեղի է ունենում կատարողական վարույթի արդյունքում: Վերոգրյալը վկայում է այն մասին, որ չնայած Կոնվենցիայի 6-րդ հոդվածն ուղղակիորեն չի ամրագրում վերջնական դատական ակտի կատարման իրավունքը, այնուամենայնիվ, այն համարվում է արդար դատաքննության իրավունքի անօտարելի տարր:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ կատարողական թերթի տրամադրումը կոչված է կատարողական վարույթի միջոցով ապահովելու օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարման գործընթացը, ինչն իր հերթին հանդիսանում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը: Մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված արդար դատաքննության իրավունքը կդառնա վերացական, եթե պետության իրավական համակարգը թույլ տա, որ դատարանի՝ ի վնաս կողմերից մեկի կայացրած վերջնական, պարտադիր դատական ակտը մնա անկատար: Ավելին, եթե Կոնվենցիայի 6-րդ հոդվածն առանց պաշտպանության թողնի, դատական ակտերի ի կատար ածումը, ապա դա, հավանաբար, կհանգեցնի այնպիսի իրողության, որ անհամատեղելի կլինի իրավունքի գերակայության սկզբունքների հետ, որը պայմանավորվող պետությունները պարտավորվել են պահպանել Կոնվենցիան վավերացնելիս *(տե՛ս, Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 07.05.2002 թվականի վճիռը, կետ 34, Հորնսբին ընդդեմ Հունաստանի գործով Եվրոպական դատարանի 19.03.1997 թվականի վճիռը, կետ 40):*

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել, որ ցանկացած դատական ակտ, որը մտել է օրինական ուժի մեջ, ձեռք է բերում պարտադիրության հատկանիշ: Ընդ որում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս արձանագրել է, որ ցանկացած դատարանի կողմից ընդունված դատական որոշման կատարումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով պետք է դիտվի որպես «դատավարության» բաղկացուցիչ մաս *(տե՛ս, Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 07.05.2002 թվականի վճիռը, կետ 34):*

Անդրադառնալով դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտի էությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում նշել է, որ դատական ակտի հարկադիր կատարման կառուցակարգն ամբողջական է դարձնում դատավարությունը և ապահովում է շահագրգիռ անձի պահանջների բավարարումը, իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլորի համար և ենթակա է կատարման դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կանոններին համապատասխան *(տե՛ս, ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բուժինն ընդդեմ Անուշ Իսպիրյանի թիվ ՎԴ6/0076/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը):*

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից զինվորական վրանների, արշավի մահճակալների ձեռքբերման նպատակով 04.08.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-20-7/21» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով, 2-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած «Աբի» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, քանի որ վերջինս հայտ ներկայացնելու պահին ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի 16.04.2020թ.-ին կայացված թիվ ՍՑ-ՆԳ-2020/68 որոշմամբ ընդգրկված է եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/13254/02/20 քաղաքացիական գործով հայցի ապահովման միջոց կիրառելու մասին 19.05.2020թ.-ին կայացված որոշման հիման վրա 01.06.2020թ.-ին տրված կատարողական թերթի հիման վրա հարուցված կատարողական վարույթի և կատարողական գործողությունների ընթացքում հարկադիր կատարողի կողմից 22.06.2020թ.-ին կայացվել է կատարողական վարույթը ավարտելու մասին որոշում, այն հիմնավորմամբ, որ 03.06.2020թ.-ին կայացրած «Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին» որոշմամբ կասեցվել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի 16.04.2020թ. կայացրած թիվ ՍՑ-ՆԳ-2020/68 որոշման կատարումը մինչև սույն գործով եզրափակիչ դատական ակտի ուժի մեջ մտնելը:

«Աբի» ՍՊԸ-ն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակից հանվել է 26.09.2020թ.-ին, հիմք՝ ՀՀ ֆինանսների նախարարության 25.09.2020թ.-ի թիվ 01-1/26-1/14549-20 գրությունը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԵԴ/13254/02/20 քաղաքացիական գործով հայցի ապահովման միջոց կիրառելու մասին 19.05.2020թ.-ին կայացված որոշումը կատարվել է 26.09.2020թ.-ին, որպիսի պայմաններում Ընկերությունն իրավունք չուներ մասնակցելու ՀՀ պաշտպանության նախարարության կողմից զինվորական վրանների, արշավի մահճակալների ձեռքբերման նպատակով 04.08.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-20-7/21» ծածկագրով բաց մրցույթին՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիման վրա:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նաև փաստել, որ բողոքի քննության ընթացում բողոքաբերի կողմից չի ներկայացվել ապացույց այն մասին, որ դատարանի վերոնշյալ որոշումը Հանձնաժողովի կողմից ստացվել է մինչև Ընկերության հայտը մերժելը՝ 22.09.2020թ.-ը: Ինչպես նաև, որ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը, մինչև գնման ընթացակարգին հայտ ներկայացնելը՝ 15.09.2020թ.-ը, անմիջականորեն և առձեռն հանձնվել է ՀՀ ֆինանսների նախարարությանը, որի դեմ կիրառվել է հայցի ապահովման միջոցը և ով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա հրապարակում է գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակը:

Վերոնշյալ հանգամանքների առկայության պարագայում միայն հնարավոր կլիներ արձանագրել պարտադիր որոշման չկատարման փաստի ու դրանից բխող որպես իրավական հետևանք նախատեսված արգելքները խախտելու համար դատարանի որոշմամբ դատական տուգանքի նշանակման մասին:

Հետևաբար, գնահատող հանձնաժողովի կողմից թիվ ԵԴ/13254/02/20 քաղաքացիական գործով 19.05.2020թ.-ին կայացրած որոշման մասին իրազեկված չլինելու պայմաններում «Աբի» ՍՊԸ-ի հայտը մերժելը չի կարող գնահատվել որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 7-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի պահանջների խախտում: Հանձնաժողովի գործողություններում առկա չէ իրավական որոշակիության սկզբունքի խախտում, որն էլ, ըստ էության, երաշխավորում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կայունությունը, ինչը, ի թիվս այլ հատկանիշների

(անհերքելիություն, բացառիկություն, նախադատելություն), ենթադրում է այդպիսի դատական ակտի պարտադիրությունը:

Դատական ակտերի կատարումը, որպես արդար դատաքննության իրավունքի բաղադրիչ, դիտարկվում է որպես արդար դատաքննության բաղկացուցիչ տարր, այն ունի բացառիկ նշանակություն արդարադատության արդյունավետ կենսագործման համար, քանի որ մարդու խախտված իրավունքների դատական պաշտպանության իրավունքը չի կարող երաշխավորված իրացվել, եթե վերջինիս խախտված իրավունքների վերականգնման վերաբերյալ վերջնական դատական ակտը մնում է անկատար:

Դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտի նպատակը վերջին հաշվով խախտված իրավունքները վերականգնելու նկատառումներով արդարադատության իրականացման արդյունքում ընդունված ակտի կատարման ապահովումն է: Այսինքն՝ դատական ակտերի հարկադիր կատարում պահանջելու իրավունքն ածանցվում է դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքներից, որպիսի պայմաններում այդ իրավունքը պետք է վերապահվի դատավարության այն մասնակցին, որի խախտված իրավունքը վերականգնելու նպատակով ընդունված է համապատասխան դատական ակտ կամ դատական գործառույթներ իրականացնող մարմնի ակտ: Հետևաբար դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքի բաղադրատարր և «իր գործի հրապարակային քննության»՝ որպես դատավարական գործընթացի փուլ:

Վերոգրյալի հաշվառմամբ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին դատարանի կողմից կայացված և կատարում ենթադրող միջանկյալ դատական ակտերն ենթակա են կատարման, հակառակ պարագայում դատական ակտի կայացումը կկրի ձևական բնույթ:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 01.06.2020թ.-ին տրված թիվ ԵԴ/13254/02/20 կատարողական թերթի հիմքով պետք է կասեցվեր ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի 16.04.2020թ կայացրած թիվ ՍՑ-ՆԳ-2020/68 որոշման կատարումը՝ մինչև գործով եզրափակիչ դատական ակտի ուժի մեջ մտնելը, որն էլ, ՀՀ ԱՆ ՀԿԱ ծառայության կողմից կատարողական վարույթն արատելու մասին 22.06.2020թ.-ին կայացված որոշման համաձայն կատարվել է:

Վերոնշյալի հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը փաստում է, որ դատարանի կողմից թիվ ԵԴ/13254/02/20 քաղաքացիական գործով հայցի ապահովման միջոց կիրառելու մասին 19.05.2020թ.-ին կայացված որոշման 2-րդ կետը, այն է՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը www.gnumner.am համացանցային կայքում հրապարակած «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ»-ից «Աբի» ՍՊԸ-ին հանելուն պարտավորեցնելու մասով՝ մնացել է անկատար:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-20-7/21» բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ և Ընկերության հայտն անբավարար գնահատելով ու ապա մերժելով՝ ապահովել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի իմպերատիվ (պարտադիր) դրույթների կատարումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Աբի» ՍՊԸ-ի կողմից 25.09.2020թ.-ին ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/108 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**